ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի Ազգայնոց՝ մանաւանդ այլ եւ այլ բարենպաստակ Հայկ- ընկերութեանց եւ Ազգային հաստատութեանց վարչութեանց քաղցր եւ ողջամիտ ուշադրութիւնը հրաւիրումենք Արարատի ներկայ ամսատետրի «Փոքր-էնֆ՝ ա՞ցեալ» վերնագրով յօդուածի վերայ։

***

Ի Պարսկահայոց առ մեզ հասած ուրախառիթ տեղեկութիւնք կը ծանուցանեն թէ՝ Պարսկաստանի մայրաքաղաք Թէհրանի մէջ, Նոր-Ջուղայի բարեջան Առաջնորդ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսի ձեռամբ և տեղւոյն հայ ժողովրդեան աջակցութեամբ և բարեպաշտական օժանդակութեամբը, Ցուլիս ամսոյ 3-ին, յանուն Սրբոյն Գէորգայ՝ եղած Հայոց հին եկեղեցւոյ վերաշինութեան հիմնարկութեան հանդէս է կատարուել։

Նմանապէս Գեր. Առաջնորդի կրթասիրական ջանից և հոգածութեան շնորհիւ, Պարսից Արեգ. Շահին կողմանէ տարեկան 125 թումանի թոշակ է նուիրուել և յատկացուել Ջուղայի Հայոց ազգային վարժարանին, և այդ թոշակը սահմանող արքունական Հրովարտակն ևս յանձնուել է Պարսկահայոց Հոգևոր իշխանութեանը։

***

Донская пчела (Դոն-ի-է- Պէլ-) ռուս լրագրի մէջ կարդումենք, որ Ն. Նախիջևանի Բարեկ. Սարգիս քահանայ Ոսկերչեանը նկատելով որ Ռոստովի Բէալական ուսումնարանի հայ ուսանողները զրկուած են մնում իւրեանց ազգային եկեղեցւոյ դաւանութեան և կրօնի ուսումից, սոցա դասաւանդութիւնը նոյն ուսումնարանում մատակարարուող ուսանելի առարկայից ծրագրում չլինելու պատճառաւ, նոյն ուսանողների ծնողաց ցանկութեան համաձայն խնդրագրով դիմել է նոյն ուսումնարանի Պ. Տեսչին՝ այս մասին պատշաճաւոր կարգադրութիւն անելոյ համար, և յուսով եմք թէ՝ Պ. Տեսուչը այս իրաւացի և արդար պահանջին շուտով բաւականութիւն կտայ։

— Ն. — Նախիջևանի մեր Սիրելի Ազգայնոց և Բարեկրօն Ոսկերչեանց քահանայի այսօրինակ խոհեմ ընթացքը ամենայն գովութեան արժանի է։ Սա յայտնի ապացոյց է թէ՝ նոքա ազգային դաստիարակութեան վսեմ գործին ամենաուղիղ տեսակետից սկսած են նայել։ զգացած են որ իւրեանց մանուկները Ազգի և ազգային Եկեղեցւոյ ճշմարիտ և պիտանի անդամներ պատրաստելու համար բաւական չեն մի միայն արտաքին կենցաղօգուտ ուսմունքն ու գիտութիւնքը, այլ պէտք է նոցա ազգային կրօնական և բարոյական ուսմունք ևս։ Բայց ներուի մեզ ասել թէ՝ որքան եւ դոցա այդ առաջարկութիւնը, այն է Բէալական ուսումնարանում աւանդելի առարկայից ծրագրի մէջ մտցնել եւ Հայկ. Եկեղեցւոյ կրօնի դասաւանդութիւնը, իբրև իրաւացի պահանջ կատարումն ստանայ Տեսչութեան կողմից՝ այնու ամենայնիւ դա երկրորդական մի-

ջոցն ու ճանապարհն է ազգային — կրօնական և բարոյական հիմնաւոր և նպատակայարմար դաստիարակութեան, դա միայն լաւագոյն է չլինելուց։ Մանկավարժական ընդունուած օրէնք է, որ իւրաքանչիւր ազգի մանուկ այն ժամանակն իւր ազգային — կրօնական և բարոյական դաստիարակութիւնը գնում է հաստատուն հիման վերայ, երբ նա իւր դաստիարակութիւնն ու կրթութիւնն սկսում է իւր մայրենի լեզուով ստանալ ազգային դպրոցի մէջ։

Վասնորոյ մենք համեստաբար խորհուրդ կտայինք ինչպէս մեր ամենայն սիրելի Ազգայնոց, նոյնպէս և Նոր — Նախիջևանի Հայ — հասարակութեան, որ նոքա 1876 թուին Վեհ. Հայրապետի հրամանաւ Ս. Էջմիածնում հրատարակուած Հայոց ծխական դպրոցաց կանոնաց համաձայն հոգ տանէին իւրեանց մանուկները 8-9 տարեկան հասակում տալ իւրեանց ազգային ծխական և այլ դպրոցները, որովք բարեբաղդաբար հարուստ է Ն. Նախիջևանը, ուր 4—5 տարի ազգային դաստիարակութեան ոգւով, ծնողական անմիջական հսկողութեան ներքոյ, մայրենի լեզուի և կրօնի մէջ փոքր ի շատէ զարգանալուց յետոյ, 12—13 տարեկան հասակում յանձնել թեմական կամ արքունի բարձրագոյն ուսումնարաններին, որով կիսով չափ հարթուած կլինի նոցա յառաջադիմութեան ճանապարհը իւրեանց յառաջագոյ ուսումնառութեան ասպարիզի մէջ և թեթևացած կլինի արքունի ուսումնարանաց հոգսերի բեռը։ Տակաւին ինչ ինչ հանգամանքները, որոնք թէ ծանրութիւն են պատճառում մանուկների ծնողացը նիւթապէս և թէ դժուարացնում են մանուկների նպատակայարմար դաստիարակութեան գործը, ողջամիտ ընթերցողաց թողում ք դուշակել։

Մանաւանդ թէ համեմատելով արքունական ուսումնարանների ծրագրի մէջ տեղ տուած Հայոց լեզուի և կրօնի դասերի սակաւաթիւ քանակութիւնը՝ մեր ծխական դպրոցների ծրագրում նշանակուած նոյն դասերի մեծ քանակութեան հետ, ամենայն ոք կհամոզուի, որ վերջնոյս չորսամեայ դասընթացքում աւելի շատ կանցնի հայ մանուկը Հայոց լեզուից ու կրօնից՝ քան արքունական ուսումնարանների 7—8 ամեայ դասընթացքի ամբողջ շրջանում։

ՆԱՄԱԿ ԱԳՔԻՐՄԱՆԻՑ.

Ահա իրողութիւն մը, որ եթէ այլ ևս ծածկուի, իւր բարոյական և նիւթական տեսակէտով, կրնայ այս հետևութիւնները ծագել։ —) տեղւոյս ազգայնոց զայրոյթը արդարապէս գրգռել։ Բ.) ազգային շինութեանց բարեկարգութեանցն սպառնալ յետոյ։ Իրողութիւնը Ագքիրմանիս երեսփոխան Պ. Խիւգավերտիի հաշուետուութեան եղանակն է։ Ցիշեալ եբեսփոխանը մինչև ցայժմ եկեղեցւոյ ել և մտից հաշիւը նահապետական եղանակով կը ներկայացներ Քիշնևի Կոնսիստորեային։ Սակայն Գեր. Մակար սրբազանի իւր առաջնորդական դահը բարձրացած